

Կ-035-26.06.2017-ԳԿ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

**«ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՈԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հոկտեմբերի 9-ի ՀՕ-97 օրենքի՝ (այսուհետև Օրենք) 3-րդ հոդվածի 18-րդ պարբերությունը ձանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Օրենքի 55.1 հոդվածի՝

1. «էլեկտրոնային հաղորդակցության ցանցի» բառերը փոխարինել «հեռարձակման թվային ցանցի» բառերով:

2. 4-րդ մասի «հաղորդակցության ցանցի» բառերը փոխարինել «հեռարձակման թվային ցանցի» բառերով:

Հոդված 3. Օրենքի 55.2 հոդվածում՝

1. 2-րդ մասի «երեք» բառը փոխարինել «վեց» բառով, իսկ 4-րդ և 5-րդ մասերի «վեց» բառը փոխարինել «երեք» բառով:

2. Լրացնել նոր 9-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ.

«9. Ազգային հանձնաժողովը մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթը հայտարարում է չկայացած, եթե՝

1) սահմանված ժամկետում ոչ մի դիմում չի ներկայացվել կամ ներկայացված դիմումներից ոչ մեկը չի համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին.

2) մրցույթի միակ մասնակցի կամ բոլոր մասնակիցների հեռարձակման թվային ցանցի ստեղծման նախագծի և ժամանակացույցի տեխնիկական փորձաքննության արդյունքում տրվել է բացասական եզրակացություն, ընդ որում այս դեպքում հանրային լսումներ չի անցկացվում.

3) մրցույթի միակ մասնակցի կամ բոլոր մասնակիցների հեռարձակման թվային ցանցի ստեղծման նախագծով ներկայացված հեռարձակման ցանցի առաջարկվող սփռման տարածքի չափը չի համապատասխանում սույն օրենքի 55.1. հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջին:»:

Հոդված 4. Օրենքի 62-րդ հոդվածի 16-րդ մասի 3-րդ նախադասությունում «մարզում» բառից հետո լրացնել «թվային» բառը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
Կ-035-26.06.2017-ԳԿ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հոկտեմբերի 9-ի ՀՕ-97 օրենքի՝ (այսուհետև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 18-րդ պարբերությունը ձևաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Օրենքի 55.1 հոդվածի՝

1. «էլեկտրոնային հաղորդակցության ցանցի» բառերը փոխարինել «հեռարձակման թվային ցանցի» բառերով:

2. 4-րդ մասի «հաղորդակցության ցանցի» բառերը փոխարինել «հեռարձակման թվային ցանցի» բառերով:

Հոդված 3. Օրենքի 55.2 հոդվածում՝

1. 2-րդ մասի «երեք» բառը փոխարինել «վեց» բառով, իսկ 4-րդ և 5-րդ մասերի «վեց» բառը փոխարինել «երեք» բառով:

2. Լրացնել նոր 9-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ.

«9. Ազգային հանձնաժողովը մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթը հայտարարում է չկայացած, եթե՝

1) սահմանված ժամկետում ոչ մի դիմում չի ներկայացվել կամ ներկայացված դիմումներից ոչ մեկը չի համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին.

2) մրցույթի միակ մասնակցի կամ բոլոր մասնակիցների հեռարձակման թվային ցանցի ստեղծման նախագծի և ժամանակացույցի տեխնիկական փորձաքննության արդյունքում տրվել է բացասական եզրակացություն, ընդ որում այս դեպքում հանրային լսումներ չի անցկացվում.

3) մրցույթի միակ մասնակցի կամ բոլոր մասնակիցների հեռարձակման թվային ցանցի ստեղծման նախագծով ներկայացված հեռարձակման ցանցի առաջարկվող սփռման տարածքի չափը չի համապատասխանում սույն օրենքի 55.1. հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջին:»:

Հոդված 4. Օրենքի 62-րդ հոդվածի 16-րդ մասի 3-րդ նախադասությունում «մարզում» բառից հետո լրացնել «թվային» բառը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ և ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՐԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը
1	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներ	Հոդվածների կետերի համարակալումը համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին, համաձայն որոնց՝ հոդվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջա- կետով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով:	Ընդունվել է: Կատարվել է համա- պատասխան փոփոխություն